

բառերի որոշ ազալազումներ (օրինակ, Տ. Շչեպկինա-Կուպերնիկի թարգմանության մեջ), իսկ երբեմն այդ էլ շափազանց աննշան է (օրինակ, Պ. Վեյբրեդի թարգմանության մեջ): Կատակերգության վերջին թարգմանիչ Ն. Գաշանցը բարբառային ձևերին տուրբ չի տվել: Միայն Իվինսի և Կալստի տեքստում որոշ բառերի ազալազում է թույլ տվել: Աուրենյանցը բավական աշխատանք է կատարել իր թարգմանության վրա և զմիշտ չէ նկատել, որ բնագրի մի շարք նբբություններ նա ճիշտ է հասկացել և արտահայտել: Նշենք նաև, որ բնագրի բոլոր շափածո հատվածները թարգմանված են շափածոյով:

ՄԻ ՆՈՐ ՏՎՅԱԼ

Հաղորդում Վլադիմիր Վաբգանյանի

«Համլետի» հայ թարգմանիչների թիվը հետզհետե ընդլայնվում է: Մինչև վերջին ժամանակները հայտնի էին միայն հետևյալ թարգմանիչների անունները՝ Ա. Տետևյան, Ս. Արծրունի, Ավ. Եզեկյան, Հ. Մասեհյան, Գ. Բարազյան, Ըստ Վ. Բերդրաշչյանի թարգմանել է Ա. Կասկանդիրյանը ևս: Այս շարքը վերջերս լրացավ նաև մի այլ թարգմանությանը (ոչ ամբողջական), որ հայտնաբերվել է Մատենադարանում՝ Գարբիել Պատկանյանի թղթերում: Այսպիսով, ուրեմն, «Համլետը» հայերեն թարգմանելու լսթ փորձ է արվել: Այդպես է հայտնի մասնագիտական գրասենյակները: Այս տվյալների վրա տվելուանում է մեկը ևս, որի մասին մինչև հիմա ոչ մի հիշատակություն չէ եղել:

Ատեփանոս Մալխասյանը Շեքսպիրից թարգմանել է երկու դործ, մեկը՝ «Էլիր թագավորը», մյուսը՝ «Մակբեթը»: Առաջինը լույս է տեսել 1888-ին Պետերբուրգում, երկրորդը՝ 1892-ին, Թիֆլիսում: Մեր հաջորդ հաղորդումով հանդամանորեն կանգադառնանք «Մակբեթի» թարգմանության ապագրության հետ կապված մանրամասնություններին: Իսկ հիմա շտապում ենք մասնագետների ուշադրությունը հրավիրել մի նոր տվյալի վրա:

Աս. Մալխասյանի մի նամակից երևում է, որ նա ևս թարգմանել է «Համլետ», էթև ոչ ամբողջությամբ, այդ գոնև մի մասը, հավանաբար սկիզբը: «Այժմ,— ասված է այդ նամակում,— թարգմանում եմ «Համլետը»:

Նամակը, որից մեջբերում կատարեցինք, գրված է 1882-ին: Այսպիսով, ուրեմն, պարզ է դառնում թարգմանության թվականը: Բացի այդ՝ նույն նամակում գրված է, որ «Համլետը» թարգմանում է նույն շափով և ուղղությամբ ինչ-որ «Մակբեթը»: Այդ ասելով թարգմանիչը նկատի ունի երկու հանգամանք. 1) ողբերգության շափածո հատվածները թարգմանված են հայկական տաղաչափությամբ. 2) թարգմանության մեջ գործածված են ցուցական դերանունների իզական սեռերը՝ սե, դե, նե:

Իր թարգմանությունը Մալխասյանը ավարտել է, թև ոչ, հայտնի չէ: Անհավանական չէ, որ անավարտ թողած լինի, նկատի ունենալով գրական շրջանների քննադատական վերաբերմունքը իր թարգմանական սկզբունքների նկատմամբ:

Այսպիսով, «Համլետի» հայերեն թարգմանությունների պատմությունը, որ դեռ գրված չէ, բայց երևի մի օր գրվի, հարստանում է մի նոր տվյալով: